

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2005թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

2005 թ. ինստիտուտի ստացած կարևորագույն արդյունքն է ինստիտուտի կողմից պատրաստած և հրատարակած «Հայոց պատմության հարցեր» հոդվածների ժողովածուի 5-րդ և 6-րդ հատորները:

«Հայոց պատմության հարցեր» խորագրով ժողովածուի 5-րդ հատորը նվիրված է Հայաստանում ժողովրդագրական գործընթացների պատմությանը սկզբից մինչև 21-րդ դարի սկիզբը: Հայ և օտար բազմաբնույթ սկզբնաղբյուրների հարուստ հենքի, ինչպես նաև հարցին առնչվող բազմալեզու գրականության հիման վրա հայ պատմագիտության մեջ առաջին անգամ ժողովածուում ամփոփված են հիմնահարցի ամբողջական պատմությանը նվիրված ուսումնասիրություններ:

Ժողովածուի 6-րդ հատորը նվիրված է Միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցերին: Այն Հայաստանի քաղաքական պատմության մի շարք հարցերից բացի ընդգրկում է նաև գիտության այլ բնագավառներին՝ պատմագրության, աղբյուրագիտության, վիճակագրության, տեղագրության և հոգևոր կյանքին ու մշակույթին նվիրված ուսումնասիրություններ: Ժողովածուում ամփոփվում է 2005թ. հունիսի 24-ից 26-ը Եղեգնաձորում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած գիտական ժողովում կարդացված զեկուցումները: Գիտաժողովը նվիրված էր հայոց գրերի 1600-ամյա հոբելյանին:

2005թ. ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող 3 գիտահետազոտական՝ բազային և 6՝ թեմատիկ թեմաների գծով կատարված զգալի աշխատանքները, հրատարակած և հրատարակության հանձնված մի շարք մենագրություններն ու ժողովածուները, տասնյակ գիտական հոդվածները և հրապարակումները:

«Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» թեմայի ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ.Պողոսյանի «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIXդ. վերջ – XXդ. սկիզբ)» արժեքավոր մենագրությունը: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ հեղինակը ձեռնարկել է XIX դարի վերջի – XX դարի սկզբի ֆրանսիական պատմագրության նվաճումների և ելևէջների համակողմանի ուսումնասիրությունը՝ ցեղասպանության առաջին փուլի՝ համիդյան կոտորածների պատմության գնահատման ասպարեզում: Մենագրության մեջ քննական վերլուծության են ենթարկվել քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող ֆրանսիացի պատմաբանների, ինչպես նաև քաղաքական ու կրոնական գործիչների ուսումնասիրությունները:

Ֆրանսերենից Վ.Պողոսյանի հայերեն թարգմանությամբ 2005թ. լույս է տեսել ֆրանսահայ պատմաբան Արթուր Պեյլերյանի աշխատասիրությամբ դեռևս 1983թ. Փարիզում լույս ընծայված «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում 1914-1918թթ.» փաստաթղթերի երկհատորյա ժողովածուն: Հատորները ամփոփում են ֆրանսիական զանազան արխիվներից (մասնավորապես, Արտաքին գործերի նախարարության արխիվից) քաղված և առաջին

անգամ շրջանառության մեջ դրված անտիպ փաստաթղթեր, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և Հայկական հարցին 1914-1918թթ.:

Գերմաներենից թարգմանությամբ և պ.գ.դ. պրոֆեսոր Ստ. Ստեփանյանի առաջաբանով հրատարակվել է Վոլֆանգ և Ջիգրիդ Գուստերի կողմից կազմված «Հայոց ցեղասպանություն. պաշտոնական փաստաթղթեր գերմանական արխիվներից» ժողովածուն: Առաջին անգամ հրատարակվող բազմաթիվ փաստաթղթերը անհերքելի ապացուցում են թուրքական իշխանությունների պատասխանատվությունը հայերի ցեղասպանությունը պետականորեն կազմակերպելու և իրականացնելու գործում:

Լույս է տեսել ինստիտուտի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդան Ս. Կրկյաշարյանի «Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI- մ.թ. IV դդ.)» արժեքավոր մենագրությունը, որում հիմնականում օտարալեզու սկզբնաաղբյուրների հիման վրա հեղինակը ներկայացնում է հիմնահարցի ամբողջական պատմությունը: Աշխատանքը մեծ ներդրում է հայ պատմագիտության մեջ:

«Հայաստանի պատմական աշխարհագրություն, ժողովրդագրություն և քարտեզագրություն» թեմայի շրջանակներում հրատարակվել է ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Ա.Սահակյանի՝ «Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», մենագրությունը, որը նվիրված է 1870-ական թթ. մինչև 1914թ. Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական իրավիճակին: Առաջին անգամ քննության են առնված այն էթնոժողովրդագրական գործընթացները, որոնք տեղ են գտել նահանգում տվյալ ժամանակահատվածում:

Նույն թեմայի գծով հրատարակվել է ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Ա.Հայրապետյանի՝ «Արևելյան Շիրակը XIX–րդ դարի առաջին կեսին» պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը, որը նվիրված է պատմական Շիրակ գավառի արևելյան հատվածի վարչական բաժանումների, բնակավայրերի ու ազգաբնակչության տեղաբաշխման, ռուսական կայսրության կողմից վարվող ժողովրդագրական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, դրանց պատճառների և դրսևորման առանձնահատկությունների, ինչպես նաև մի շարք այլ հիմնահարցերի պարզաբանմանը:

Հրատարակվել է ինստիտուտի հայցորդ Կարեն Հ. Խանլարիի՝ «Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005թթ.)» գրքույկում ներկայացվում է Հայոց ցեղասպանության իրականացումից հետո Թուրքիայի Հանրապետությունում գոյատևած հայության էթնոկրոնական այլակերպման ու վերակերպման գործընթացը, վեր է հանվում տվյալ տարրի վիճակագրական և ժողովրդագրական մոտավոր պատկերը:

Հրատարակվել է ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. պրոֆեսոր Ա.Մելքոնյանի «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» ուշագրավ աշխատությունը, որում հեղինակը ինչպես արխիվային փաստաթղթերի և վավերագրերի, այնպես էլ թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն հենքի վրա ներկայացրել է Ախալցխայի և Ախալքալաքի հայկական դպրոցների ստեղծման ու գործունեության պատմությունը:

«Հայ եկեղեցու պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» թեմայի շրջանակներում հրատարակվել է թեմայի ղեկավար, ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ.գ.դ. Վ. Վարդանյանի «Հայոց եկեղեցին Վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում» ուշագրավ աշխատությունը: Ժամանակաշրջանի քաղաքական պատմության ընդհանուր ֆոնի վրա հեղինակին հաջողվել է

ներկայացնել Հայոց եկեղեցու հոգևոր և քաղաքական դերն ու նշանակությունը հայոց պատմության մեջ:

Ինստիտուտում հետազոտվող գիտական թեմաների շրջանակներում լույս են տեսել.

Ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ.գ.դ. Է.Դանիելյանի՝ «Գանձասարի պատմություն» աշխատությունը, որում հայ պատմիչների, հրապարակված վիճակագրությունների և փաստաթղթերի հիման վրա ներկայացված է Գանձասարի վանքի պատմությունը: Վեր է հանված Գանձասարի կաթողիկոսության տեղն ու նշանակությունը Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգում;

Ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Է.Մելքոնյանի՝ «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն», արժեքավոր աշխատությունը, որը նոր խոսք է հայ պատմագրության, սփյուռքագիտության մեջ: Գիտական շրջանառության մեջ առաջին անգամ դնելով բազմաթիվ փաստեր, հեղինակը ներկայացնում է ՀԲԸ Միության գործունեության ամբողջական պատմությունը: ՀԲԸՍ դերն ու նշանակությունը այնչափ մեծ էր, որ առանց նրա անկարելի է պատկերացնել հայ ժողովրդի XX դ. պատմությունը: Աշխատությունն ունի նաև որոշակի կիրառական նշանակություն՝ արդի Հայաստանում բարեգործական հաստատությունների թե՛ հիմնադրման և թե՛ առավել արդյունավետ գործելու առումներով:

Հրատարակվել է ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ.գ.դ. Է.Կոստանոյանի՝ «Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության», աշխատությունը նվիրված է 19-րդ դարի 80-ական թվականների արևմտահայ մշակութային ընկերությունների ստեղծմանը, դպրոցական գործի կազմակերպմանը: Գրքում ցույց է տրվում, որ մշակութային զարգացումը նպաստեց հասարակական կազմակերպությունների, գաղտնի՝ ազատագրական նպատակներ հետապնդող ընկերությունների, ապա քաղաքական կուսակցությունների առաջացմանը: Դրանց զուգահեռ 80-ականների կեսերից իր առաջին քայլերն էր անում հայդուկային կամ ֆիդայական շարժումը:

«Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության» թեմայի գծով հրատարակվել է ինստիտուտի առաջատար գիտաշխատողներ պ.գ.դ. պրոֆեսորներ Վ.Ղազախեցյանի՝ «Հողային հարցը և հողային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում (1918-1920թթ.)», և Ա.Հակոբյանի՝ «Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920թթ.)» աշխատությունները:

Վ.Ղազախեցյանի ուսումնասիրությունում արխիվային վավերագրերի և այլ նյութերի հիման վրա լուսաբանվում է Հայաստանի առաջին Հանրապետության ներքին կյանքի կարևոր բնագավառներից մեկը՝ հողային հարցի վիճակը և դրա լուծման ուղղությամբ պետության ձեռնարկած առաջին միջոցառումները:

Ա.Հակոբյանի աշխատությունում առաջին անգամ հայ պատմագրության մեջ գիտականորեն համակարգված և համառոտ բնութագրված են Հայաստանի առաջին Հանրապետության տարածքում լույս տեսած շուրջ 60 անուն պարբերականներ՝ ըստ իրենց բնույթի ու բովանդակության, գաղափարաքաղաքական ուղղվածության, կուսակցական պատկանելության և այլն:

«Խորհրդային Հայաստանի պատմության» թեմայի շրջանակներում հրատարակվել են.

Ինստիտուտի ավագ գիտաշխատող պ.գ.թ. Գ.Խաչատրյանի՝ «Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին», ուսումնասիրության մեջ

քննության են առնվում նախապատերազմյան տարիների Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմնական միտումները, լուսաբանվում են պատերազմի պայմաններին համապատասխան արդյունաբերության վերակառուցման և հետագա զարգացման, բանվորական կադրերի պատրաստման ու մատակարարման հարցերը:

Ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ.գ.դ. Զ.Ղասաբյանի՝ «Կրակոտ և անտեսանելի ճակատում: (Հուշեր անցյալից)» աշխատությունը նոր լույս է սփռում ԽՍՀՄ-ի, Խորհրդային Հայաստանի հետախուզության պատմության, հայ հետախույզների գործունեության մինչ օրս անհայտ իրադարձությունների վրա:

2005թ. ինստիտուտի գիտաշխատողները շարունակել են աշխատանքները «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակ ստեղծելու ուղղությամբ:

### **Ինստիտուտի կողմից 2005թ. հրատարակված աշխատությունների ցուցակը**

1. **Վ. Ղազախեցյան**, «Հողային հարցը և հողային բարեփոխումները Հայաստանի հանրապետությունում (1918-1920թթ.)», Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
2. **Է. Մելքոնյան**, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն», Երևան, «Մուղնի»
3. **Գ. Խաչատրյան**, «Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.)», Երևան, «Գիտություն»
4. **Ա. Հակոբյան**, «Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմությունը 1918-1920թթ.», Երևան, Հեղինակային
5. **Մ. Ներսիսյան**, «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր», Երևան, «Գիտություն»
6. **Ա. Սահակյան**, «Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
7. **Մ. Հակոբյան**, «Ստեփան Ոսկանյանը և նրա միջավայրը», Երևան, «Գիտություն»
8. **Է. Կոստանդյան**, «Ակնարկներ արևմտահայ մշակութային հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թթ.)», Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
9. **Ս. Կրկյաչարյան**, «Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI- մ.թ. IV դդ.)», Երևան, «Լուսակն»
10. **Ա. Պեյլերյան**, «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918թթ.)», հ. I, II, (ֆրանսերենից Վ.Պողոսյանի թարգ.), Երևան, «Հայաստան»
11. **Է. Դանիելյան** «Գանձասարի պատմությունը», Երևան, «Գանձասար»
12. **Ա. Հայրապետյան** «Արևելյան Շիրակը XIX դարի I կեսին», Գյումրի, «Դպիր»
13. **Զ. Ղասաբյան**, «Կրակոտ և անտեսանելի ճակատում», Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
14. **Կ. Խանլարի**, Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
15. **Վ. Պողոսյան**, «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (19 դ. վերջ – 20 դ. սկիզբ)», Երևան, «Գիտություն»

16. **Վ. Վարդանյան**, Հայոց եկեղեցին Վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Ս.Էջմիածին
17. **Ա.Մելքոնյան**, Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
18. **Вольфанг и Зигрид Густы**, Геноцид армян (пер. с герм.(, ред. проф. Ст. Степанян, Ереван, Айастан
19. **А. Хосроева**, "Геноцид ассирийцев в Османской Турции и прилегающих тюрконаселенных местностях (конец XIX – первая четверть XX вв.), Ереван, Институт истории НАН РА
20. 1918թ. Մայիսյան գոյապայքարի պատմության մի նոր էջ (հոդվածների ժող.) **խմբ. Ա.Մելքոնյան, Հ.Մելիքյան**
21. **Հայոց պատմության հարցեր**, հ.5, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
22. **Հայոց պատմության հարցեր**, հ.6, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հաշվետու տարում ինստիտուտի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը պարգևատրվել է ՀՀ Նախագահի ամենամյա հատուկ մրցանակով՝ գիտության և մշակույթի բնագավառում ունեցած ակնառու ձեռքբերումների համար:

Ինստիտուտի տնօրեն Ա.Ա.Մելքոնյանը և բաժնի վարիչ Ս.Ս.Ստեփանյանը՝ Ցեղասպանության 90-ամյակի միջոցառումներին ակտիվ մասնակցության համար պարգևատրվել են մեդալով և պատվոգրերով: Ա.Ա.Մելքոնյանը պարգևատրվել է նաև Երևանի պետական բժշկական համալսարանի ոսկե մեդալով:

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	Գիտաժողով, նվիրված 1915թ. ցեղասպանության 90-ամյակին	ՀՀ ԳԱԱ Նախագահության և Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ, 19-22.04.2005թ. ՀՀ ԳԱԱ Նախագահություն, Պատմության ինստիտուտ	200	15
2	Հայագիտական գիտաժողով, նվիրված Մեսրոպյան գրերի 1600-ամյակին (Միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցեր)	Եղեգնաձոր 24-26. 06. 2005թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,	35	-
3	Գիտաժողով, նվիրված Համշենահայերի պատմությանը	Սոչի, 12-14. 10. 2005 Պատմության ինստիտուտ, Հ.Յ.Դ. Բյուրո	45	15
4	Գիտաժողով, նվիրված Հ.Յ. Դաշնակցության 115-ամյակին	Ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոն 04.11.2005 Պատմության ինստիտուտ, Հ.Յ.Դ. Բյուրո	50	-

ՊԻ աշխատակիցների արտասահման, այդ թվում  
ԱՊՀ -անդամ երկրներ, կատարած գործուղումները

Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
	Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
ԱՄՆ	1	2	-
Ռուսաստան	2	1	-
Վրաստան	1	-	1
Անգլիա	-	1	-
Իրան	2	1	-
Ուկրաինա	-	2	-
Ֆրանսիա	2	-	-
Լիբանան	1	-	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն  
ՊԻ-ում

Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
	Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
Ռուսաստան	-	2	1
ԱՄՆ	-	2	2
Գերմանիա	-	-	1
Սիրիա	-	1	1
Վրաստան	-	-	2
Եգիպտոս	-	1	1
Լիբանան	-	-	2
Իրան	-	2	-

ՊԻ գիտաշխատողների 2005 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումների թեզիսներ և այլն	
Հանր.	Արտասահ.	Հանր.	Արտասահ.	Հանր.	Արտասահ.
22	-	-	-	116	21

Ասպիրանտների թվաքանակը

Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1. 01. 2006թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
ա)կ	ա)չկ	ա)կ	ա)չկ
8 (-)	8 (2)	2 (-)	1 (-)

ՊԻ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

Աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	ԳԱԱ ակադեմիկոսներ (այդ թվում կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք)	Գիտության թեկնած. (այդ թվում կանայք)
98 (40)	77 (26)	4 (-)	21 (2)	36 (12)

Մասնագիտացված գիտական խորհուրդների աշխատանքները

Պաշտպանությունների թիվը			
Ինստիտուտների աշխատակիցների կողմից		Ինստիտուտներից դուրս հայցողների կողմից	
դոկտ.	թեկնած.	դոկտ.	թեկնած.
3	4	5	6
2	2	3	18

Պատմության ինստիտուտի տնօրեն,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.

Ա.Ա.Մելքոնյան